ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

27 ապրիլի 2015թ. թիվ 248-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2014Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 7-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. հունվարի 10-ի թիվ 7-Ա հրամանով հաստատված հավելվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերում 1-ին կետերի 5-րդ ենթակետերը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր խմբագրությամբ.

<<5) բացված պատուհանում <<բեռնել նախապատրաստման գործիքը>> սեղմակի միջոցով բեռնում է ընթացակարգի հայտի պատրաստման գործիքը (եթե այն համակարգչում նախապես տեղադրված չէ) և <<բեռնել մրցույթի կառուցվածքը>> սեղմակի միջոցով բեռնում է ընթացակարգի կառուցվածքը: Համակարգչում բեռնվում է .xml ֆայլ, որը պետք է բացել նախապատրաստման գործիքով՝ սեղմելով <<Բացել փաստաթուղթը>> սեղմակը,>>:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՖՆ 001802